

Բրադոս

Բրադոսը մանր եղջերավոր կենդանիների սուր ընթացքով թունավարակային հիվանդություն է, որը դրսևորվում է շրդանի և տասներկուամսնյա աղիքի լորձաթաղանթների արյունահոսային բորբոքումով և պարենքիմատոզ օրգանների կազմափոխությամբ:

Բրադոսի հարուցիչը գրամդրական, բազմաձև, շարժուն, անաէրոբ, սպոր առաջացնող մանրէ է:

Սպորավոր ձևը իր կենսունակությունը պահպանում է երկար ժամանակ, իսկ բարենպաստ պայմաններում նաև կարող է բազմանալ: Սպորավոր ձևի ոչնչացման համար օգտագործում են 10%-ոց ծծմբակարբոլային խառնուրդի լուծույթ, 5%-ոց կծու նատրիումի կամ ֆորմալդեհիդի, 3% ակտիվ քլոր պարունակող քլորակրի լուծույթներ:

Համաճարակաբանական տվյալները

Բրադոսը համաճարակային բռնկումների ձևով բռնկվում է տարվա բոլոր եղանակներին, սակայն հաճախ արձանագրվում է վաղ գարնանը, աշնանը և ձմռանը: Բնական պայմաններում հիվանդանում են բոլոր հասակային խմբի այծերը և ոչխարները: Հաճախ հիվանդանում են ամենագեր և քիչ շարժվող կենդանիները: Վարակի առաջացմանը նպաստում են ցուրտը, կերի որակի կտրուկ փոփոխությունը, մակաբուծային, հատկապես ճիճվային հիվանդությունները:

Հիվանդության հարուցիչ աղբյուր են համարվում հիվանդ կենդանիները և առողջ մանրէակիրները, որոնք կղկղանքի միջոցով հարուցիչներին արտազատելով, վարակում են արոտավայրը, անասնակերը, ջրելատեղերը և այլն:

Կենդանիների վարակումը կատարվում է ներքին ճանապարհով, կերերի և ջրի միջոցով: Նախատրամադրող պայմաններ են համարվում օրգանիզմի դիմադրողականության անկմանը նպաստող գործոնները, մասնավորապես ստամոքսի և աղիների ֆունկցիայի խանգարումները սառած և բորբոսնած կերերի օգտագործումից, օրգանիզմի սառեցումից, կերի հետ հողի և տիղմի ընդունումից:

Ախտածնությունը

Ախտածնությունը քիչ է ուսումնասիրված, մինչդեռ հայտնի է, որ միշտ չէ, որ ներքին եղանակով վարակումից կարող է հիվանդությունը վերարտադրվել: Կենդանիների մոտ մարսողական համակարգի ախտահարումների դեպքում, երբ խանգարվում է ստամոքսաղիքային ուղիների շարժիչ և հյութազատիչ ֆունկցիան հարուցիչի համար

ստեղծվում են բարենպաստ պայմաններ, որի բազմացման հետևանքով առաջանում են հզոր ազդող թույներ, որոնք ներծծվելով աղիներից առաջացնում են օրգանիզմի թունավորում:

Ախտորոշումը

Բրադոտը ախտորոշում են կլինիկա-համաճարակաբանական, ախտաբանա-անատոմիական և մանրէաբանական հետազոտությունների հիման վրա: Լաբորատորիա են ուղարկում թարմ դիակը կամ ներքին օրգանները, շրդանի և տասներկուամտնյա աղիքի ախտահարված մասերը, խողովակաձև ոսկորները, որոնք վերցվել են ոչ ուշ, քան կենդանու անկումից 3-4 ժամ հետո:

Կարանտինը և բուժումը

Հիվանդության գերսուր ընթացքի դեպքում բուժումը անարդյունավետ է, իսկ սուր ընթացքի ժամանակ կարելի է օգտագործել հակաբիոտիկներ՝ տերամիցին, սինտոմիցին, բիոմիցին և այլն:

Վարակի բռնկման դեպքում տնտեսությունը համարվում է անապահով և իրականացվում են կարանտինային միջոցառումներ: Փոխում են կենդանիների արոտավայրը և ջրելատեղերը, հիվանդներին մեկուսացնում են և բուժում, առողջներին վակցինացնում: Կատարում են հիվանդ կենդանիների, անասնաշենքերի ախտահանություն վերը նշված ախտահանիչներով: Արգելվում է հիվանդ կենդանիների սպանողը, սասկած ոչխարների մաշկի հանելը, բուրդ խուզելը, կիթը և կաթի օգտագործումը: Գոմաղբը և կերի մնացորդները, ինչպես նաև դիակը մաշկի հետ այրում են:

Անապահով տնտեսություններից սահմանափակումները վերացնում են հիվանդության վերջին դեպքից 20 օր հետո, եթե կատարվել է կենդանիների վակցինացում և եզրափակիչ ախտահանություն:

Բրադոտով հիվանդ կենդանիների միսը, սպանդային մթերքները, կաթը, կաշին, բուրդը ոչնչացնում են այրելու միջոցով: